ութեամբ, այլ ոչ կորուսաք զօրութիւն բանա-
կանութենէ հոգւոյ մերոյ վասն մտաւ ածելոյ
սղալանս մեր և արդարութիւն արարչին մերոյ,
ուրեմն հարկաւոր է մեզ իբր սևացեալ երեսօք
ամօթախած դիմօք դառնալ առ դրունս Արարչին
մերոյ, որում համբերեաց մեզ այսքան վաղնջոց
ժամանակաւ, զի ելցուք մեք 'ի գլորմանէ 'ի յոտս
կացուք ուրանալով ամենայն յոյս ումեքէ և
ուխտեսցուք զի այսուհետ ոչ երբէք յուսաս-
ցուք ումեք, ոչ ոք 'ի պարզութենէ արենակցէ
ոչ ոք 'ի պետութենէ գնտոց զօրութենէ, և ոչ
արարած ոք 'ի յերկրէ, բայց միմիայն յուսա-
նալով Տէր և արարիչն մեր աննման մի Ա-
տուածն համայնից և դարձարուք և ընթասցուք
առ նմայ միայնոյ և համարձակաձայն գոչելով
ասասցուք ըստ անառակի որդոյ, հայր մեղաք
մինչև անօրինեցաք և անկեալ թշուառացաք, լուր
մեզ Տէր և նայեա՛ բնակութիւնս պատուական
զօրութեան հոգւոյ մերոյ զի հող է, և դու բարի
ոք գիտես քան զի դու ստեղծեր, այլ մեք ծա-
նեաք և խոստովանիմք առաջի քոյ արդարն, զի
մեղաք և փոշմանիմք մեք 'ի գործոց անօրէնու-
թեանց մերոց, ընկալ մեզ Տէր ըստ առակին սի-
բելի որդոյ քոյ և մուծ մեզ 'ի գաւիթս տան
քոյ հացալից զի մի՛ խսպառ կորնչիմք 'ի սովու
անկարգութենէ մերմէ, և խոստանամք այժմ
քեզ Տէր զի պահեսցուք պատուիրանն քոյ՝ այ-